ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ

ՏԵՂԱԿԱԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023-2024 ուստարի

| Հ/Հ | Գործունեության տեսակ, պլանավորում | Վերահսկողություն (նկարագիր) | Կատարման ժամկետ |
|---|---|---|---|
| 1 | Հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողների ընդունելության կազմակերպում | Ընդունելության կազմակերպում «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման» կարգի պահանջներին համապատասխան | Օգոստոս |
| 2 | Դասարանների կազմավորման նախագծի ներկայացում մանկավարժական խոհրդի նիստում | Դասարանների կազմավորման նախագծի ներկայացում «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման» կարգի պահանջներին համապատասխան | Օգոստոս |
| 3 | Վերաքննությունների կազմակերպում և արդյունքների ներկայացում մանկավարժական խորհրդին | «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի` հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման» կարգի պահանջներին համապատասխան | Օգոստոս |
| 4 | Հանրակրթության պետական չափորոշչում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում կամ առանձին սեմինարի ձևով | Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների ապահովում | Օգոստոս |
| 5 | Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մեթոդական | Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինում | Օգոստոս |

| | | | |
|---|---|---|---|
| | միավորումների առաջարկությունների ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | | |
| 6 | Ուսումնական պարապմունքների դասաբաշխում և դասացուցակի կազմում | Դասաբաշխում և դասացուցակի կազմում հաստատության սանիտարական կանոնների և նորմերին» համապատասխան | Օգոստոս |
| 7 | Մեթոդական միավորումների կազմավորում ըստ ուսումնական բնագավառների և նախարարության կողմից հաստատված ուսումնական հաստատության ֆինանսավորման կարգի: | Մեթոդական միավորումների կազմավորում | Օգոստոս |
| 8 | Ուսուցիչների կողմից կազմած առարկայական թեմատիկ պլանների ստուգում և հաստատում | Առարկայական թեմատիկ պլաններում չափորոշչային պահանջների համապատասխանության ապահովում | Օգոստոս |
| 9 | Առարկայական մեթոդական միավորումների տարեկան աշխատանքային պլանների ներկայացում տնօրենի հաստատմանը:<br>Առարկայական ծրագրերի թեմատիկ պլանների և չափորոշիչների խիստ համապատասխանությունը որպես ուսուցչի աշխատանքի արդյունավետության կարևոր պայմանների քննարկում մ/մ նիստերում | Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ապահովում | Օգոստոս |
| 10 | Սովորողների առաջադիմության նկատմամբ հսկողություն (ՆԴՎ) | Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում | Ուստարվա ընթացքում |
| 11 | Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում | Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում | Ուստարվա ընթացքում |
| 12 | Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում | Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում | Ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (ՆԴՎ) | ԲՏճՄ առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Ուստարվա ընթացքում |
| 14 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (ՆԴՎ) | Գեղագիտական, ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության մեթոդական միավորման առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Ուստարվա ընթացքում |
| 15 | Ուսուցիչների կողմից Էլեկտրոնային դասամատյանների վարման գործընթացի ապահովման նկատմամբ վերահսկողություն | Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում | Ուստարվա ընթացքում |
| 16 | Ուսուցիչների կողմից բաց թողնված դասաժամերի փոխարինում | Ուսումնադաստիարակչական անխափան գործընթացի ապահովում | Ուստարվա ընթացքում |
| 17 | Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով | Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում | Ուստարվա ընթացքում |
| 18 | Հաստատության ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում | Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն | Ուստարվա ընթացքում |
| 19 | Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան (ՆԴՎ) | Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում | Ուստարվա ընթացքում |
| 20 | Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում | Այդ ուղղությամբ աշխատանքների կազմակերպում, համապատասխան փաթեթի ստեղծում: | Ուստարվա ընթացքում |
| 21 | Երիտասարդ ուսուցիչներին ցուցաբերվող մեթոդամանկավարժական օգնության կարևորությունը դպրոցում:<br>Սկսնակ ուսուցիչների աշխատանքային գործունեության | Մեթոդամանկավարժական օգնության ցուցաբերում:<br>Շարունակական աջակցության տրամադրում սկսնակ ուսուցիչներին (վերապատրաստումներ, մասնագիտական զարգացման դասընթացներ) | Ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | վերահսկողություն և օգնության կազմակերպում | | |
| 22 | Անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) մշակում, իրականացման և գնահատման գործընթացի վերահսկում | ԱՈՒՊ-ի մշակումը և պահպանումը սովորողի անձնական գործում: | Ուստարվա ընթացքում |
| 23 | Ցածր առաջադիմություն ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին շարունակական աջակցության տրամադրում | Ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ընդգրկում է երկարօրյա դասերին:<br>Ուսումնասիրում է ցածր առաջադիմությամբ սովորողների ինքնուրույն աշխատանքները դասերի ընթացքում:<br>Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին ընդգրկում է առարկայական խմբակներում: | Ուստարվա ընթացքում |
| 24 | 5-րդ և 7-րդ դասարաններում ՀՊՉ-ին համապատասխան ուսումնառության կազմակերպման վերահսկողություն | Գործընթացի ապահովում | Ուստարվա ընթացքում |
| 25 | Մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձի ընդհանրացնում և տարածում | Մանկավարժական առաջավոր փորձի բովանդակային և մեթոդաբանական հարցերի համակարգում և տեղայնացնում | Ուստարվա ընթացքում |
| 26 | Առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների վերահսկողություն (ՆԴՎ) | Մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների | Ուստարվա ընթացքում |
| 27 | Ուսումնական հաստատության ուսուցիչների, ուսուցչի օգնականների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների կողմից կազմված ԿԱՊԿՈՒ վկայագրված սովորողների 2023-2024 ուստարվա կազմած ԱՈՒՊ օրինակելի ձևի կիրառման մշտադիտարկում: | ԱՈՒՊ-ի ձևի պատշաճ լրացման ապահովում: | Ուստարվա ընթացքում |
| 28 | ԲՏճՄ առարկաների դասավանդման որակի բարձրացման խնդիրների և նախագծային աշխատանքների կազմակերպման հարցեր քննարկում | Աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն | Ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 29 | Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում | Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում օրինակելի ուսումնական պլանների պահանջներին և ուսումնական հաստատության համար սահմանված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան | Սեպտեմբեր |
| 30 | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և ԱՈՒՊ-ի գործողությունների քննարկում | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության ապահովում անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) համաձայն | Սեպտեմբեր |
| 31 | Հաստատության սովորողներին դասագրքերով ապահովվածության ստուգում | Հաստատության սովորողներին դասագրքերով ապահովում «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի» պահանջներին համապատասխան | Սեպտեմբեր |
| 32 | Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան (ՆԴՎ) | Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում | Սեպտեմբեր |
| 33 | Շախմատի մրցումների դպրոցական փուլի անցկացում | Գործընթացի կազմակերպում | Սեպտեմբեր |
| 34 | 5-րդ և 9-րդ դասարաններում մնացորդային գիտելիքների ստուգում «Մաթեմատիկա» և «Հանրահաշիվ» առարկաներից | Գործընթացի կազմակերպում | Սեպտեմբեր |
| 35 | Արժևորող գնահատականի կարևորությունը որպես ուսումնական գործընթացը խթանող պայման: | Մ/Մ նիստերում գնահատականի կարևորության քննարկում | Հոկտեմբեր |
| 36 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Ֆիզիկա» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Հոկտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 37 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Շախմատ» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Հոկտեմբեր |
| 38 | Ուսումնական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա | Հոկտեմբեր |
| 39 | Էլեկտրոնային մատյանների գրանցման,գնահատման, բացակայությունների հարցի քննարկում մանկավաժական խորհրդի նիստում | Էլեկտրոնային դասամատյանների պատշաճ լրացման ապահովում | Հոկտեմբեր |
| 40 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Ֆիզկուլտուրա» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Նոյեմբեր |
| 41 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Քիմիա» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Նոյեմբեր |
| 42 | Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան (ՆԴՎ) | Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում | Դեկտեմբեր |
| 43 | Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում և անցկացում: | Գործընթացի կազմակերպում | Դեկտեմբեր |

| | | | |
|---|---|---|---|
| 44 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Կենսաբանություն» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Դեկտեմբեր |
| 45 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Դեկտեմբեր |
| 46 | Ուսումնական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա | Դեկտեմբեր |
| 47 | 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում մանկավարժական խորհրդի նիստում | Առաջին կիսամյակում սովորողների առաջադիմության արդյունքների վերլուծություն | Դեկտեմբեր |
| 48 | Սովորողներին հանձնարարվող տնային աշխատանքների տեսակների հարցի քննարկում Մ/Մ նիստում | Աշխատանքի կազմակերպում | Դեկտեմբեր |
| 49 | Երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքների դասաբաշխում և դասացուցակի կազմում | Դասաբաշխում և դասացուցակի կազմում և հաստատության սանիտարական կանոններ և նորմերին» համապատասխան | Դեկտեմբեր |
| 50 | Առաջին կիսամյակում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ տարվող | Մեթոդամանկավարժական աջակցության տրամադրում ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին | Հունվար |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանքների պլանավորում | | |
| 51 | <<Զինված ուժերի կառուցվածքը և նշանակությունը>> թեմայով՝օրինակելի դաս նվիրված Հայոց բանակի ծննդյան տարեդարձին: | «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն | Հունվար |
| 52 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Աշխարհագրություն» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Հունվար |
| 53 | Դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած աշակերտների հետ տարվող աշխատանքների կազմակերպում | Ուսուցիչների կատարած աշխատանքների վերահսկողություն | Հունվար-փետրվար |
| 54 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Ինֆորմատիկա» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Փետրվար |
| 55 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Երաժշտություն» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Փետրվար |
| 56 | Ուսումնական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա | Փետրվար |

| | | | |
|---|---|---|---|
| 57 | 2023-2024 ուստարվա շրջանավարտների ավարտական քննությունների նախապատրաստման աշխատանքների քննարկում մանկավարժական խորհրդի նիստում | Սովորողների համար ավարտական քննությունների պատշաճ կազմակերպման ապահովում | Փետրվար |
| 58 | Սովորողների նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու հարցի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում | Ուսումնադաստիարակչական անխափան գործընթացի ապահովում | Մարտ |
| 59 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Մաթեմատիկա» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Մարտ |
| 60 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Կերպարվեստ» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Մարտ |
| 61 | Ապահովել 3-9-րդ դասարաններում սովորող աշակերտների ակտիվ մասնակցությունը «Կենգուրու» միջազգային մրցույթին | | Մարտ |
| 62 | Ուսումնական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա | Մարտ |

| | | | |
|---|---|---|---|
| 63 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Հանրահաշիվ» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Ապրիլ |
| 64 | Միջոցառումների և օրինակելի դասերի կազմակերպում բնագիտամաթեմատիկական առարկաներից | Աշխատանքների աջակցություն և վերահսկողություն | Ապրիլ |
| 65 | Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն (Ներդպրոցական վերահսկողություն) | «Երկրաչափություն» ուսումնական առարկայի ուսուցման որակի ուսումնասիրություն և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն | Ապրիլ |
| 66 | 9-րդ դասարաններում հանրահաշվից գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքների կազմակերպում: | Կազմել առաջադրանքներ և վերահսկողություն սահմանել աշխատանքների կատարման գործում: | Ապրիլ |
| 67 | Ուսուցիչների կատարողականների հաշվետվությունների ներկայացում | Ուսուցիչների կողմից կատարողականի վերլուծություն՝ հաստատության ուսումնական պլանին համապատասխան | Ապրիլ |
| 68 | Ուսումնական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա | Մայիս |
| 69 | Դպրոցում գործող առարկայական խմբակների աշխատանքների արդյունավետության վերլուծություն մ/մ նիստերում: | Կատարված աշխատանքների քննարկում և վերլուծություն | Մայիս |

| | | | |
|---|---|---|---|
| 70 | Քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացման և քննական հանձնաժողովների կազմի հաստատման հարցերի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում | Քննությունների կազմակերպում և վերահսկում «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի» դրույթներին համապատասխան | Մայիս |
| 71 | Ուսումնական աշխատանքների վիճակի մասին հաշվետվությունների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում | Հաշվետվությունների կազմում ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա | Հունիս |
| 72 | 2023-2024 ուսումնական տարվա սովորողների՝ երկրորդ կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփման, հաստատությունից սովորողի տեղափոխման, ազատման և հանրակրթության մեջ ընդգրկման (աշակերտական շարժի) հարցի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում | | Հունիս |
| 73 | Ավարտական քննությունների արդյունքների ամփոփում և ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության կազմում | | Հունիս |

*Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի*

*տնօրենի տեղակալ`* *Ա. Գևորգյան*

## Ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում

Ուսումնական պարապմունքների դասացուցակի (այսուհետ՝ դասացուցակ) կազմումն իրականացվում է՝ պահպանելով սովորողների օրական և շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն թույլատրելի նորմերը:
Ըստ դասարանների շաբաթական ծանրաբեռնվածությունը սահմանում է ուսումնական հաստատությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված սանիտարական կանոնները և նորմերը:
Պետական ուսումնական հաստատություններում մեկ ակադեմիական դասաժամի նորմատիվային տևողությունը 45 րոպե է:

**Սովորողների օրական ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն թույլատրելի նորմերը**

| Դասարաններ | Օրական թույլատրելի առավելագույն թույլատրելի ուսումնական ծանրաբեռնվածության նորմեր |
|---|---|
| 1 | Օրական ոչ ավելի, քան 4 դաս, շաբաթը 1 անգամ 5 դաս՝ ֆիզկուլտուրայի դասի հաշվին |
| 2-4 | Օրական ոչ ավելի, քան 5 դաս, շաբաթը 1 անգամ 6 դաս՝ ֆիզկուլտուրայի դասի հաշվին |
| 5-6 | Օրական ոչ ավելի, քան 6 դաս |

| | |
|---|---|
| 7-9 | Օրական ոչ ավելի, քան 7 դաս |

**Սովորողների շաբաթական ծանրաբեռնվածության առավելագույն թույլատրելի նորմերը**

| **Դասարաններ** | **Շաբաթական առավելագույն թույլատրելի ուսումնական ծանրաբեռնվածության նորմեր (ակադեմիական ժամեր)** | |
|---|---|---|
| | 6-օրյա ուսումնական շաբաթ | 5-օրյա ուսումնական շաբաթ |
| 1 | 22 | 20 |
| 2-4 | 25 | 22 |
| 5 | 31 | 28 |
| 6 | 32 | 29 |
| 7 | 34 | 31 |

| | | |
|---|---|---|
| 8-9 | 35 | 32 |

**Դասացուցակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ**

1. Դասացուցակները կազմելիս հաշվի է առնվում դասաժամերի օպտիմալ հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա և շաբաթվա ընթացքում ուսումնական առարկաների ճիշտ հաջորդականությունը՝ բնական, մաթեմատիկական և հումանիտար առարկաների դասաժամերը երգի, նկարչության և ֆիզիկական դաստիարակման դասաժամերին, ինչի շնորհիվ ստեղծվում է սովորողների մտավոր գործունեությունից ֆիզիկականի փոխվելու հնարավորություն:
2. Կրկնակի դասաժամերը թույլատրվում են միայն լաբորատոր և ստուգողական աշխատանքների, տեխնոլոգիա և ֆիզիկական դաստիարակման պարապմունքների (ճմռանը) անցկացման ժամանակ:
3. 1-ին դասարանի սովորողների համար առավել բարդ առարկաները դասացուցակում ներառվում են 2-րդ դասաժամին, 2-4-րդ դասարանի համար՝ 2-3-րդ դասաժամերին, իսկ 5-12-րդ դասարանների համար՝ 2-4-րդ դասաժամերին՝ սովորողների ամենաբարձր աշխատունակության ժամանակ,
4. Բարդ առարկաները (ֆիզիկա, մաթեմատիկա, օտար լեզու) հարկ է զուգակցել հեշտ ընկալվող առարկաների հետ՝ պատմություն, աշխարհագրություն և այլն:
5. Սովորողների մտավոր աշխատունակության լավագույն կենսաբանական ռիթմը լինում է օրվա ժամը 10-12-ի սահմանում: Այս ժամերին նկատվում է նոր մատուցվող նյութի յուրացման ամենաբարձր արդյունավետությունը:

| Հանրակրթական առարկաներ | Միավորների քանակը (բարդության աստիճան) |
|---|---|

6. Սովորողների մտավոր աշխատունակությունը տարբեր է նաև ուսումնական շաբաթվա տարբեր օրերին: Մտավոր աշխատունակության մակարդակը բարձրանում է շաբաթվա կեսին, իսկ շաբաթվա սկզբին (երկուշաբթի) և վերջին (ուրբաթ)՝ ընկնում:

   Հաշվի առնելով դասացուցակին ներկայացվող հիգիենիկ պահանջները՝ շաբաթվա ընթացքում ուսումնական ծանրաբեռնվածության բաշխումը պետք է կազմվի այնպես, որ նրա ամենամեծ ծավալը լինի երեքշաբթի և (կամ) չորեքշաբթի օրերին և դասացուցակում այդ օրերին պետք է նախատեսված լինեն ավելի բարդ առարկաներ:

   Դասացուցակը կազմելիս անհրաժեշտ է օգտվել հետևյալ աղյուսակից, որտեղ յուրաքանչյուր առարկայի բարդության աստիճանը գնահատվում է բալերով: Առավելագույն բալերի գումարը պետք է լինի երեքշաբթի և չորեքշաբթի օրերի համար:

**Հաստատության 1-4-րդ դասարանների առարկաների բարդության աստիճանի սանդղակ**

| | |
|---|---|
| Մաթեմատիկա | 8 |
| Ռուսաց լեզու | 7 |
| Օտար լեզու | 8 |
| Ես և շրջակա աշխարհը | 6 |
| Մայրենի | 5 |
| Կերպարվեստ և երաժշտություն | 3 |
| Տեխնոլոգիա | 2 |
| Ֆիզկուլտուրա | 1 |
| Շախմատ | 8 |

**Հաստատության 5-9-րդ դասարաններում ուսուցանվող առարկաների բարդության աստիճանի սանդղակ**

| Հանրակրթական առարկաներ | Միավորների քանակը (ըստ բարդության աստիճանի) | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 5-րդ դասարան | 6-րդ դաս. | 7-րդ դաս. | 8-րդ դաս. | 9-րդ դաս. |
| Քիմիա | - | - | 13 | 10 | 12 |
| Երկրաչափություն | - | - | 12 | 10 | 8 |
| Ֆիզիկա | - | - | 8 | 9 | 13 |
| Հանրահաշիվ | - | - | 10 | 9 | 7 |
| Գծագրություն | - | - | - | 5 | 4 |
| Կենսաբանություն | 10 | 8 | 7 | 7 | 7 |
| Տնտեսագիտություն | - | - | - | - | 11 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մաթեմատիկա | 10 | 13 | - | - | - |
| Օտար լեզու | 9 | 11 | 10 | 8 | 9 |
| Ռուսաց լեզու | 8 | 12 | 11 | 7 | 6 |
| Հայրենագիտություն | 7 | - | - | - | - |
| Բնագիտություն | 7 | 8 | - | - | - |
| Աշխարհագրություն | - | - | - | - | 5 |
| Հայաստանի աշխարհագրություն | - | 7 | 6 | 6 | 5 |
| Հայոց պատմություն | - | 8 | 6 | 8 | 10 |
| Համաշխարհային պատմություն | - | 8 | 6 | 8 | 10 |
| Հայոց եկեղեցու պատմություն | 8 | 8 | 6 | 8 | 10 |
| Հայոց լեզու | 8 | 12 | 11 | 7 | 6 |
| Տեխնոլոգիա | 4 | 3 | 2 | - | - |
| Գրականություն | 4 | 6 | 4 | 4 | 7 |
| Կերպարվեստ | 3 | 3 | 1 | 3 | _ |
| Ֆիզկուլտուրա | 3 | 4 | 2 | 2 | 2 |
| Երաժշտություն | 2 | 1 | - | - | - |
| Ինֆորմատիկա | 4 | 10 | 4 | 7 | 7 |
| ՆԶՊ և անվտ. կենսագործ. | - | - | - | 3 | 3 |

1. Հաստատության 5-9-րդ դասարանների սովորողների շաբաթվա ուսումնական ծանրաբեռնվածությունը բաժանվում է այնպես, որպեսզի առավելագույն ինտենսիվությունը (օրվա ընթացքում բալերի գումարը) լինի երեքշաբթի և հինգշաբթի օրերին, իսկ չորեքշաբթին լինի որոշ չափով թեթևացված օր:
2. Հաստատության 10-12-րդ դասարանների համար Դասացուցակի ճիշտ կազմման ժամանակ օրվա ընթացքում ըստ բարդության աստիճանի ամենաշատ բալերի քանակը` բոլոր առարկաների գումարով, լինում է երեքշաբթի և (կամ) չորեքշաբթի օրերին:
3. Դասացուցակը համարվում է սխալ կազմված, երբ օրվա բալերի առավելագույն գումարը լինում է շաբաթվա սկզբի և վերջի օրերին, կամ այն շաբաթվա բոլոր օրերին նույնն է:

**Առարկայական թեմատիկ պլանավորում**

Առարկայական թեմատիկ պլանավորումը իրականացվում է երկու փուլով` նախնական և անմիջական: Նախնական փուլի արդյունքը թեմատիկ պլանն է, որն իրենից ներկայացնում է տվյալ առարկայի ուսումնական նյութի գիտականորեն հիմնավորված բաշխումը (ծավալը և հերթականությունը) ժամանակի մեջ: Երբ թեմատիկ պլանում գրվում են դասերի անցկացման ամսաթվերը, ապա այն վեր է ածվում օրացուցային թեմատիկ պլանի: Դպրոցում դասավանդվող բոլոր ուսումնական առարկաների թեմատիկ պլանները կազմելու համար կան մեթոդական ցուցումներ: Չնայած դրան ուսուցիչները նոր ուսումնական տարվա աշխատանքներին նախապատրաստվելիս պետք է ուսումնասիրեն առարկայի ծրագիրը և չափորոշիչը: Նրանք պետք է ուշադրություն դարձնեն թեմաների և առարկայների ուսուցման նպատակների` նոր չափորոշչային պահանջների համապատասխանության վրա: Պետք է առանձնացնեն ամեն թեմայի չափորոշչային պահանջները և հստակ պատկերացնեն յուրաքանչյուր դասի տեղը և դերը տվյալ թեմայի, բաժնի ուսուցման համակարգում:
Թեմատիկ պլանավորման նախապատրաստման հաջորդ փուլը ուսումնական պլանի, մեթոդական գրականության, դասագրքի և ուսումնական ձեռնարկների ուսումնասիրությունն է և այնուհետև դասի պլանավորումը:

**Թեմատիկ պլանի կառուցվածքը**

Թեմատիկ պլանը ունի հստակ կառուցվածք: Այն կազմված է թեմաներից, դասերից, գրավոր աշխատանքներից և պահուստային ժամերից: Թեմայում դասերին անհրաժեշտ է հատկացնել այնքան ժամաքանակ, որը հավասար է թեմային հատկացված ժամերին: Դասերին համապատասխանում են դասագրքի պարագրաֆները, գործնական կամ լաբորատոր աշխատանքները և թեմատիկ գրավոր աշխատանքները

**Թեմատիկ պլանավորումը չափորոշչային պահանջներին համապատասխան**

Որպես կանոն թեմատիկ պլանները չունեն հղում չափորոշչին: Թեմատիկ պլանը կազմվում է միայն առարկայի ծրագրի հիման վրա: Թեմատիկ պլանը կազմելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի չափորոշչային պահանջները և ըստ գնահատման մեթոդաբանության հասկանա, թե գնահատման որ միավորին է համապատասխանում չափորոշչային պահանջի կատարումը: Դա հնարավորություն կտա ուսուցչին ճիշտ պլանավորել թեմայի յուրաքանչյուր դաս և վստահ լինել չափորոշչային պահանջը կատարելու մեջ: Մյուս կողմից դա հնարավորություն է տալիս հանրակրթական ուսումնական հաստատության տնօրեններին և տեղակալներին, ուսումնասիրելով թեմատիկ գրավոր աշխատանքների արդյունքները, գնահատել ուսուցչի կողմից չափորոշչային պահանջների կատարումը:

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

***Կազմող՝ «ԿՃՆԱԿ» հիմնադրամի***

***Ուսումնական հաստատության զարգացման***

***կառավարման բաժնի մասնագետ***

***Ս. Նասիբյան***

| | **Պաշտոնային պարտականություններ** | **Ծանոթություն** |
|---|---|---|
| 1 | Պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար | • Կազմում է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը<br>• Կազմում է դասաբաշխման նախագիծը<br>• Կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակի նախագիծը<br>• Հավանություն է տալիս մեթոդական միավորումների տարեկան պլանին<br>• Հավանություն է տալիս դասղեկների տարեկան պլանին |

| | | |
|---|---|---|
| | | |
| 2 | Պատասխանատու է հաստատությունում ուս ումնական ծրագրերի կատարման համար | • Հավանություն է տալիս թեմատիկ պլաններին<br>• Վերահսկում է թեմատիկ պլանների կատարողականը<br>• Վերահսկում է հանրակրթության պետական չափորոշչով սահմանված առարկաների ուսումնական ծրագրերի վերջնարդյունքների ապահովումը<br>• Հսկում է առարկայական մեթոդական միավորումների պլանների և առարկայական թեմատիկ պլանների կատարողականը |
| 3 | Պատասխանատու է հաստատությունում դասավանդման որակի համար | • Իրականացնում է ուսումնական առարկաների դասավանդման որակի շարունակական մշտադիտարկում, գնահատում և օժանդակություն:<br>• Իրականացնում է ուսուցման որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ<br>• Ուսումնասիրում է ուսուցիչների դասավանդման հմ տությունները<br>• Պարպերաբար տալիս է խորհրդատվություններ և ցուցումներ ուսուցիչների կողմից դասավանդման մեթոդների (որոշ մեթոդների օրինակներ) կիրառման վերաբերյալ |
| 4 | Պատասխանատու է հաստատությունում սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույնի ապահովման համար | • Ապահովում է սովորողների մոտ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների (գիտելիքներ, հմտություններ, դիրքորոշում, արժեքներ) ձևավորման և զարգացման իրականացումը<br>• Իրականացնում է սվորողների կրթական կարիքների ապահովմանն ուղղված աշխատանքներ |
| 5 | Պատասխանատու է դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համար | • Իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դպրոցական մակարդակի գնահատման վերահսկողություն՝ հիմք ընդունելով բազմամասնագիտական թիմի, դասղեկների և դասավանդող ուսուցիչների առաջարկությունները |
| 6 | Պատասխանատու է անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) մշակման, իրականացման և գնահատման համար | • Իրականացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառությունը յուրաքանչյուրի համար մշակված անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) համաձայն<br>• Պատասխանատու է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցման պլանի լրացման, մշակման և իրականացման գործընթացի համար |

| | | |
|---|---|---|
| 7 | Պատասխանատու է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և դրանց որակի ապահովման համար | • Վերահսկում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (ՏՄԱԿ) կողմից գնահատված և վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար համապատասխան մանկավարժահոգեբանական ծառայությունների կազմակերպման որակը<br>• Իրականացնում է սվորողների կրթական կարիքների ապահովմանն ուղղված աշխատանքներ |
| 8 | Հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի նկատմամբ | • Իրականացնում է առանձին ուսումնական առարկաների ուսուցման որակի ուսումնասիրութուն<br>• Ապահովում է ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման սեմինարներին, դասընթացներին և հետևում է դրանց հետագա կիրառմանը ուսումնական գործընթացում<br>• Հետևում է սովորողների կողմից անհատական աշխատանքների, նրանց կրթական կարիքների ապահովմանն ուղղված աշխատանքների որակին |
| 9 | Հսկողություն է իրականացնում սովորողների առաջադիմության նկատմամբ | • Իրականացնում է սովորողների առաջադիմության ուսումնասիրություն ուսումնական պարապմունքների ընթացքում և կիսամյակի ավարտին<br>• Իրականացնում է նպատակային դասալսումներ, որոնց ընթացքում դիտարկում է սովորողների մոտ ձևավորված գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը, արժեքային մոտեցումները և մասնակցությունը ուսումնական գործընթացին |
| 10 | Հսկողություն է իրականացնում սովորողների վարքի նկատմամբ | • Իրականացնում է վերահսկողություն սովորողների վարքի նկատմամբ (ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին», հոդված 21) հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) կողմից հաստատած ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների համաձայն |
| 11 | Հսկում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը | • Իրականացնում է վերահսկողություն ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացների՝ նորմատիվ իրավական ակտերին համապատասխանության ուղղությամբ |
| 12 | Կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը | • Կանոնակարգում է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը օրինակելի ուսումնական պլանների պահանջներին և ուսումնական հաստատության համար սահմանված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան |

| | | |
|---|---|---|
| 13 | Իրականացնում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը | • Կազմակերպում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ (սեմինարներ, վերապատրաստումներ, կլոր-սեղան քննարկումներ)<br>• Իրականացնում է ներդպրոցական վերահսկողություն՝ կիրառելով տարբեր ձևեր (անհատական, ընդհանուր և այլն)<br>• Ապահովում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը |
| 14 | Ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները | • Իրականացնում է մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների<br>• Մասնակցում է մեթոդական միավորումների (Օրինակելի կանոնադրություն «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության, կետ 91-95) նիստերին |
| 15 | Կազմակերպում է սովորողների ուսումնական պարապմունքների հսկողությունը: | • Վերահսկում է ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված կազմակերպումը<br>• Իրականացնում է սովորողների ուսուցման որակի չափելի և համեմատելի ձեռքբերումների շարունակական ապահովմանն ուղղված աշխատանքներ |
| 16 | Կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը | • Կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ», սանիտարական կանոններ և նորմերին» համապատասխան |
| 17 | Կազմում է ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ | • Կազմում է հաշվետվություններ ուսումնադաստիարակչական աշխատանքների՝ մասնավորապես սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով մեթոդական միավորումների և ուսուցիչների ներկայացրած հաշվետվությունների, եզրակացությունների հիման վրա |
| 18 | Ընդհանրացնում է մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձը | • Համակարգում և տեղայնացնում է մանկավարժական առաջավոր փորձի բովանդակային և մեթոդաբանական հարցերը՝ դրանք ուսուցիչների կողմից ուսումնական գործընթացում կիրառելու նպատակով, ինչպես նաև հետևում է դրանց պարպերաբար կիրառման գործընթացին |
| 19 | Տարածում է մանկավարժական աշխատանքի առաջավոր փորձը | • Ուսումնասիրում է այլ ուսումնական հաստատությունների (ինչպես նաև այլ երկրների հանրակրթական հաստատությունների) մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում այն ուսումնական հաստատությունում |

| | | |
|---|---|---|
| | | վերապատրաստումների, սեմինար-քննարկումների միջոցով |